ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հոկտեմբերի 2025 թվականի N 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին,

2. «Կլիմայական կամուրջ» դրամաշնորհային ծրագիրը հաստատելու և համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, 06-008-0400-0102 կադաստրային ծածկագրով 5,99952 հեկտար արոտավայրի նպատակային նշանակությունը փոխելու մասին

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է.ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 հոկտեմբերի 24
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հոկտեմբերի 2025 թվականի N 96-Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 689-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Բնական գազի անխափան մատակարարման գազահամակարգերի սպասարկման և անվտանգ սպասարկման նպատակով Հայաստանի Հանրապետության Սարչապետ համայնքի Ձորամուտ և Պետրովկա բնակավայրերի գազաֆիկացվում 2022 թվականի սուբվենցիան ծրագրով կառուցված և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում ստացած Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման:

3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է.ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Գ. ՋԱՎՈՒԿՅՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 հոկտեմբերի 24
ք. Տաշիր

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու

2025 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 96-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող գույքը անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու

Հ/h	Գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի համար	Անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի տրման օրը
1	Տաշիր համայնք, գ. Պետրովկա	01072025-06-0031	01.07.2025թ
2	Տաշիր համայնք, գ. Ձորամուտ	010720205-06-0002	01.07.2025թ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն. ՍՈԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 հոկտեմբերի 2025 թվականի N 97-Ա

«ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից ֆինանսավորվող «Տաշիր գետի ափի վերականգնում և կլիմայական դիմակայունություն կայուն զբոսաշարջության միջոցով «Կլիմայական կամուրջ» դրամաշնորհային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեից «Կլիմայական կամուրջ» ծրագրի իրականացման համար 26038350 (քսանվեց միլիոն երեսունութ հազար երեք հարյուր հիսուն) դրամ համաֆինանսավորմանը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է.ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 հոկտեմբերի 24
ք. Տաշիր

Co-funded by the European Union

Supported by Federal Ministry for the Environment, Nature Conservation, Nuclear Safety and Consumer Protection based on a decision of the German Bundestag

IKI International Climate Initiative

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

OECD

Տաշիր գետափի վերականգնում և կլիմայական դիմակայունության բարձրացում՝ էկոտուրիզմի խթանմամբ.

ENERGY SAVING FOUNDATION

«Կլիմայի կամուրջ» Նախագիծ

2024 թվականի մայիսի 26-ին հյուսիսային Հայաստանի մի շարք համայնքներ՝ այդ թվում՝ Տաշիրը, տուժեցին ավերիչ հեղեղներից: Գետերի վարարումները ոչնչացրեցին կամուրջներ, ճանապարհներ և բնակելի տներ՝ վտանգելով ավելի քան 9,700 բնակչի կյանքն ու եկամուտը: Տաշիրում վնասվել են շուրջ 150 տուն, 11 ավտոմոբիլային և 13 հետիոտնային կամուրջ, ինչը բացահայտեց տարածքի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների հանդեպ: Նախագիծը ուղղված է այս հետևանքների հաղթահարմանը՝ միաժամանակ ապահովելով ապագա դիմադրողականությունը և համայնքային կայուն զարգացումը:

Ընդհանուր նպատակը

Տաշիր գետի հունի և կենտրոնական կամուրջի վերականգնումն է՝ բնական և կառուցվածքային լուծումների համադրությամբ, ինչը կբարձրացնի կլիմայի փոփոխության ռիսկերի հանդեպ դիմակայունությունը, միաժամանակ կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական վերականգնմանը և զբոսաշրջային գրավչությանը:
Մասնավոր նպատակն է ստեղծել փորձնական մոդել, որը, ցուցադրելով բնահեն և ծախսարդյունավետ մեթոդների կիրառումը, հնարավորություն կտա նմանատիպ համայնքներին կրկնօրինակել լուծումները այլ գետային տարածքներում:

Ծրագրի հիմնական արդյունքները

Վերականգնված գետափ	Դիմակայուն կամուրջ	Տարեկան «Կլիմայի կամուրջ» փառատոնի	Բիզնեսի խթանում	Համայնքային պատրաստվածություն
Ափեզրի բարձրացված հեղեղների և էրոզիայի դիմակայունություն	Վերականգնված կլիմայի փոփոխվող պայմաններին համապատասխան:	Ամենամյա փառատոնի նախաձեռնում՝ բնապահպանական և մշակութային բաղադրիչներով:	Տեղական բիզնեսների և զբոսաշրջության ակտիվացում՝ նոր աշխատատեղերի և եկամուտների ստեղծմամբ	Համայնքային պատրաստվածության բարձրացում՝ վաղ նախազգուշացման և վտանգների կառավարման հմտությունների ձևավորմամբ:

Գործունեության հիմնական ուղղությունները հետևյալն են՝

1. Գետափի և կամուրջի տեխնիկական գնահատում և ամրացման ծրագիր:
2. Բնահեն լուծումների փորձարկում՝ ափեզրի հատվածների ամրացման համար:
3. Համայնքի մասնակցությամբ «Կլիմայական կամուրջ» փառատոնի կազմակերպում:
4. Տեղական երիտասարդության և կանանց կարողությունների զարգացում էկոտուրիզմի, կանաչ բիզնեսի և բնապահպանական ծրագրերի շրջանակում:
5. Տեղեկատվական և ուսուցողական արշավներ՝ կայուն վարքագծի ձևավորման համար:

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, սենյակ 414
Կայք. www.esfarmenia.org, Էլ. փոստ՝ info@esfarmenia.org

«Կլիմայի կամուրջ» Նախագիծ

Նախագիծը կնպաստի համայնքի դիմակայունության բարձրացմանը, վարարումների հետևանքով վնասների նվազեցմանը, ջրի որակի բարելավմանը և կենսաբազմազանության պահպանությանը: Տուրիզմի ակտիվացմամբ ակնկալվում է ավելացնել համայնքում տնտեսական ակտիվություն և ֆինանսական շրջանառություն:
Նախագիծը կնպաստի կանանց և երիտասարդների զբաղվածության աճին, ինչպես նաև համայնքի սոցիալ-մշակութային կյանքի վերականգնմանը:

Տաշիր համայնքի դերը

- Գործում է որպես **«տեղական իրականացնող գործընկեր»**, համակարգելով շինթույլտվությունները, լոգիստիկան և տեղում իրականացվող աշխատանքների վերահսկումը:
- Աջակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, տեղական ժողովների կազմակերպմանը,
- Ապահովում է **համաֆինանսավորում և համայնքային ենթակառուցվածքային աջակցություն**՝ վերականգնման և փառատոնային միջոցառումների ընթացքում:
- Հետևում է վերականգնված գետափերի, կամուրջների և հանգստի գոտիների **երկարաժամկետ պահպանությանը**
- **«Կլիմայական Կամուրջ» տարեկան փառատոնի համատեղ կազմակերպում**, նպաստելով տուրիզմի և մշակութային ժառանգության զարգացմանը
- Համագործակցում է **համայնքային խմբերի, ՓՄՁ-ների և տարածաշրջանային իշխանությունների հետ**, ապահովելով ծրագրի արդյունքների **կրկնօրինակելիությունն ու կայունությունը**:

Նախագծի ավարտից հետո համայնքը կստանձնի գետափի պահպանման և փառատոնի շարունակական կազմակերպման պարտավորությունը: Տեղական բիզնեսներն ու հասարակական կազմակերպությունները կդառնան նախագծի շահառու գործընկերներ՝ ապահովելով ֆինանսական և կազմակերպչական կայունություն:

Նախատեսված իրականացման ժամկետ՝ 2025 – 2027թթ.
Ընդհանուր բյուջե՝ 585,000 Եվրո, որից՝
90%՝ GIZ դրամաշնորհ,
10%՝ տեղական ներդրում
Տարածք՝ Լոռու մարզ, Տաշիր համախմբված համայնք (ներառում է 23 գյուղ)
Իրականացնող կազմակերպություն՝
- Էներգախնայողության աջակցման հիմնադրամ

Գործընկեր և համաֆինանսավորող՝
- **Տաշիր համայնքապետարան**

ENERGYSAVING FOUNDATION
THE "CLIMATE BRIDGE" PROJECT

Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Երեբունի Պլազա» բիզնես կենտրոն, սենյակ 414
Կայք. www.esfarmenia.org, Էլ. փոստ՝ info@esfarmenia.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2025 թվականի N 98-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, 06-008-0400-0102 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 5,99952 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պարբերության 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 –րդ հոդվածի 5-րդ, 8-րդ, 9-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշումով ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 29-ի N 2/փ- 283 դրական եզրակացությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 5,99952 հա (կադաստրային ծածկագիր 06-008-0400-0102) արոտավայր հողատեսքը փոխադրել էներգետիկայի՝ կապի՝ տրանսպորտի՝ կոմունալ ենթակառուցվածքների նշանակության կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նշանակությամբ:

2. Համայնքի ղեկավարին՝ նշված փոփոխությունները արտացոլել Տաշիր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Տաշիր

համայնքի (Տաշիր բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է.ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 հոկտեմբերի 24
ք. Տաշիր